ՀՀ Արագածոտնի մարզի« Ակունքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ՝ հայոց եկեղեցու պատմություն /5 դասաժամ/, մաթեմատիկա /8 դասաժամ/, հասարակագիտություն /9 դասաժամ/ , ինֆորմատիկա /9 դասաժամ/ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակված հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1.Դիմում /Ձև 1/ ,մեկ լուսանկար 3x4 չափի ,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,
3. Անձը հավաստող փաստաթուղթ,
4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույքի պատճեն՝ / առկայության դեպքում/,
5.Ինքնակենսագրություն /Ձև 5/,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական է կամ առկա են թերություններ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև սեպտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր ՝ ժամը 10:00 -15:00, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 20-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Ակունքի միջնակարգ դպրոց «ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Ակունք, 8-րդ փողոց, շենք 2:

Տեղեկությունների համար զանգահարել 077 71 50 31 հեռախոսահամարով:

,Ակունքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինություն